



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

587

ՀԱՏԱՐԱԿՈՒՔԻՆ ԼԵՒՈՆ ՍԱՐԻԲԷԳԵԱՆԻ



14

ԳՐԻԳՈՐ ԲՈՒՇՆԵՆՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱԻԻԹ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄ)

«ՍԱՍՄԱՅ ԾՈՒԵՐԻ ՅՈՒՇԻԿՆԵՐԻՑ»

(Երկրորդ հատոր)

ԹԻՖԼԻՉ, 1905

Տպարան «ԶԵՐԱՆ» (Նկ. Մազար. փող. 15.  
(67)



891.99  
Դ-19



891.99

04 OCT 2010

Բ-19

20 06 / 09

19 NOV 2011

Հրատարակութիւն Լեհոն ՍԱՐԻԲԷԳԵԱՆԻ

ԶԻՆՈՒՄ 1-50 անուրի.

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱԾՆԵՐՆ

891.99

Սկիզբ

Կ-19

305

1-0

**ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ**

(ԴԻԻՑԱԶՆԵՐԳԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄ)

«ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐԻ ՅՈՒՇԻԿՆԵՐԻՑ»

(Երկրորդ հատոր)

ԹԻՖԼԻՉ 1904

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մազաք. փող., 15.

(70)



27.02.2013

23173

Дозволено цензурою, 14 Августа 1904 года. г. Тифлисъ.

Մեծ պատերազմ

Վազվրդելով մունետիկներ  
Մարայ երկրի ողջ անկիւններ  
Զինւորական արին կոչ  
Ժողովուրդին բարձրագոյն.  
«Բնց է Մարայ քաղքի բազար \*).  
«Թո՛ղ ժողովուեն հարիւր հազար  
«Նուագածու երաժիշտներ  
«Եւ կռուելու զօրքի վաշտեր՝  
«Հարիւր հազար տղայ մանուկ,  
«Ջահէլ մարդիկ առանց մօրուք.  
«Թո՛ղ ժողովուեն հարիւր հազար  
«Բեղաւորներ սուր ու սուսով.  
«Թո՛ղ ժողովուեն հարիւր հազար  
»Միջակ մարդիկ թուխ մօրուսով.  
«Թո՛ղ ժողովուեն հարիւր հազար  
«Մօրուքաւոր, ձերմակատես.

\*) Հրապարակ, մէյդան:



4894-2010



«Դէ, շուտ ելէք անվախ սրտով  
«Պատերազմի մեծ հանդէս...»:

\*~\*

**Տ**ասաներկու տարեկանից  
Մինչև վաթսուն տարեկան  
Ծեր ու մանուկ, զրկուած տանից,  
Ինչպէս կռուող զօրական,  
Հըրաւիրւեց սուր-զէնքի  
Հըրամանով Մէլիքի.  
Ինքն էլ անցաւ զօրքի զլուխ.  
Մարդ \*) ուղարկեց Սասուն կանուխ,  
Թէ «գալիս եմ, Ձէնով-Յովհանն,  
Կըտրիճներով քո հոգեհան.  
Եօթը տարուայ պատրաստիր հարկ,  
Թէ չէ՝ Սասուն կ'անեմ դադարկ»:  
Նա սկսեց պատասխանել.  
«Մենք չենք կարող կռիւ անել,  
Սպասեցէք, Դաւթին կ'անչենք.  
Առանց նրան մենք ոչինչ ենք»:  
— «Հայոց ազգին երանի,  
Որ գաւակներ ձեզ ունի.  
Ի՛նչ էք դողում ուռի պէս.

\*) Անունը Կասրղ-Կասուն:

Մորա-Մէլիք ո՛վ է, տես,  
Հարկ է ուզում մեզանից.  
Ես Մըհերի արիւնից՝  
Մի՛թէ նրան կը տամ հարկ,  
Եօթը տարուայ ոսկու պարկ.  
Ի՛նչ ուզում է, թո՛ղ անի.  
Թո՛ղ կռիւ գայ Սասունի...»:  
Յովհանն ասաց.— «Դաւիթ ջան,  
Մորա-Մէլիք չար գազան՝  
Լաւ կըլինի, բարիչէր.  
Թէ չէ՝ կըգայ այս գիշեր  
Աւեր կ'անի մեր տունը,  
Քարքանդ կ'անի Սասունը»:  
— «Դուք քնեցէք ձեր տանը,  
Ես լաւ գիտեմ իմ բանը.  
Երբ կը բացուի առաւօտ,  
Ձի կըհեծնեմ եռանդոտ,  
Կ'երթամ անեղ Լիւռայ \*) դաշտ  
Իմ թշնամու դէմ անհաշտ»:

\*~\*

**Ե**ւ Դաւիթը այն գիշեր  
Վատ կռիւներ կը յիշէր.

\*) Սասունի և Մորայ մէջակող:



Այդ պատճառով չը քնեց.  
 Առաւօտը վաղ զարթնեց,  
 Լարեց աղեղն ու նետը  
 Վերցրեց քուռակն էլ հետը.  
 Ճանապարհին նըկատեց  
 Այն պառաւը \*), նախատեց.  
 — «Ո՞ւր ես գընում այդպէս դու»:  
 — «Մէլիքի հետ կուռելու»:  
 — «Թ՛շուռական, ի՞նչ ունես,  
 Նետ-անեղո՞վ պիտի՛ կուռես.  
 Ո՞ւր ես գընում մեն-մենակ,  
 Իդրդում է մեծ բանակ  
 Լիւռայ դաշտում Մէլիքի,  
 Կը հանդիպես փորձանքի»:  
 — «Հապա ասա, ի՞նչ անեմ,  
 Ո՞նց Մէլիքից ոխ առնեմ»:  
 — Այ ջրատար,  
 Խեղբի նաչար,  
 Նա պատրաստ է բիւր զօրքով.  
 Դու ուզում ես այդ խելքո՞վ  
 Մասմայ երկիր պահպանես.  
 Ափսոս, քո հօր տղան ես.  
 Քո հայրն ունէր

\*) Սրա մասին տես առաջին հատորում:

Սարք ու կարգեր՝  
 Կայծակի թուր,  
 Եսպայ մախմուր,  
 Շապիկ զրեխի,  
 Թագը գլխի,  
 Զիւր թաթարի,  
 Գուրգ հագարի.  
 Լախտահիւս խարազան  
 Կօշիկ կաշուի եզան,  
 Դալխանն \*) ադամանդի,  
 Միջկապն քեալբալանդի \*\*)  
 Եւ նա ունէր հրաշալի  
 Նժոյգ Բուռիկ-Ձալալին,  
 Որ փախչում է սաստիկութեամբ.  
 Ողջ սաղափից շինած թամբ,  
 Թառլիկները զառերով,  
 Ասպանդակը արծաթով,  
 Պայտ ոսկեգօծ չորս ոտի,  
 Սանձ ամբաշէն պողպատի,  
 Որ դնես Բուռիկ-

\*) Վահան: \*\*) Խլաթայ բարբառով մի նոր վա-  
 րիանտում պ. Բ. Խալաթեան այսպէս աւելի մանրա-  
 մասն նկարագրութիւն է տալիս Դաւթի հայր Առի-  
 ծաճն Մհերի զէնքի ու զգեստի:



Զալալի բերնին,  
Մարութայ բարձրիկ  
Սուրբ Աստուարածին  
Խաչ-Պատրազին  
Որ աջ թևին»:

Դաւիթ հարցրեց.— «Այդ բաները  
Ո՞ւր է դրել հայր Մհերը»:  
Պառաւն սասց.— «Դեռ նա հիւանդ՝  
Իր կտակով թողեց աւանդ  
Յովհանի մօտ, երբ մեծանաս՝  
Այդ բաներին դու տիրանաս»:  
— Ի՞նչպէս առնեմ, ասա, նանի:  
«Գնա գօռով աչքը հանի»:

\*~\*

Դաւիթ գրնաց Յովհանի մօտ  
Խոժու դէմքով ու բարկացկոտ.  
Բրունեց փողպատ, թափ-թափ տուեց,  
Երկու ոտքը դեռնից կտրեց.  
— Շո՛ւտ, հօրեղբայր, տուր իմ ձեռքը  
Հօրքս թողած զգեստ, զէնքը.  
Իրաւունքով քեզնից կ'ուզեմ.  
Ձեռ տալ՝ գօռով կը պահանջեմ.  
Կայծակի թուր,

Կապայ մախմուր,  
Թագը գլխի,  
Շապիկ զրեխի,  
Ձիւբ թաթարի,  
Գուրգ հագարի.

Լախտահիւս խարազան,  
Կօշիկ կաշուի եզան,  
Ղալխանն աղամանդի,  
Միջկապն քեալբալանդի:  
Կ'ուզեմ նաև հրեղէն ձին  
Եւ աջ թևի խաչ-Պատրազին»:  
Յովհան տուեց այս պատասխան.  
— «Քեզ սովըցնողի կտորւի բերան.  
Ի՞նչ կուտող ես. խօ չե՞ս գժուել,  
Եօթը տարիդ նոր լըրացրել»:  
— «Պիտի երթամ, Աստուած կանչեմ,  
Ղատ թշնամուց, ամօթ փախչեմ.  
Մինչ երբ հեռուից մեզ սպառնայ.  
Կուռում յաղթենք կամ ես կամ նա:  
Յովհանն սասց. «Ա՛յն օրից,  
Երբ զրկուեցայ քո հօրից,  
Պատ եմ շարել գոմի դուռ,  
Ես ամեն օր ծածո՛ւկ, լուռ  
Երդիկով եմ տուել խոտ,  
Յարդը զարին լիքը մօտ»:



Գոմուժ մենակ Գուռիկը չէ,  
Երեք հարիւր ձի կայ կապած.  
Գնա՛, սիրտըդ որը կպչէ՛  
Վերցրո՛ւ, որդի՛, քո հաւանած»:



**Դ**աւիթ գնաց գոմը մտաւ,  
Նժոյգ ձիեր կապած գտաւ.  
Նա սկսեց կա՛մաց կարգով  
Մէկ-մէկ մէջքին քսել ձեռքով.  
Բայց փորերը գեանին կպան.  
«Սրանք բանի պէտքը կը գան»,—  
Ասաց Դաւիթ իր մտքին.  
«Ո՛ւր է Գուռիկ-Չալալին»:  
Գնաց առաջ՝ մի պատ քաշած՝  
Տեսաւ ամուր գուռը փակած.  
Այնպէս ուժգին խփեց ոտքով՝  
Պատը փլուեց ամբողջ շէնքով.  
Տեսաւ մի ձի հրաշալի.  
«Սա է Գուռիկ-Չալալի»:  
Չեռքը տարաւ մէջքին քսեց,  
Բայց ձին խրտնած խիստ աքացեց,  
Դաւիթի բողբոջ պատին զիպաւ.  
Պատն էլ շարժուեց ու շուռ եկաւ.

Երեխի պէս Դաւիթ լացեց,  
Մօտենալով փաղաքշեց.—  
«Քեզ եմ դրել յոյսս այնպէս,  
Թէ դու կուռից ինձ կ'ազատես»:  
Մեղմիկ շոյեց և՛ մէջք, և՛ վիզ,  
Այնտեղ կեղտ էր նստած մի թիզ,  
Հանեց գոմից սանձը բռնած,  
Պառաւի մօտ տարաւ, ասաց.  
— Դէ, մի գլուխ սապոն վերցրու,  
Երկու պղինձ ջուր տաքացրու,  
Հաւ լուացիր այս նժոյգին.  
Կ'երթամ քեռուս հանեմ հողին...»:



**Մ**իւս բաներն էլ կ'ուզեմ, քեռի,  
Քեզ մօտ պահած հայր Մըհերի.  
Վեր կաց շուտով, բեր ինձ լրիւ,  
Թէ չէ՛ գլուխդ կրտամ ցրիւ»:  
Նա կատարեց պահանջ Դաւիթի.  
— Ի՛նչ եմ անում, վերցրո՛ւ, որդի՛.  
Այդ գէնքերը քո թանկագին,  
Բայց չեմ կարող խաչ-Պատրագին  
Ընծայ բերել: Գնա՛, չոզիր  
Նըրա առջև, Աստուած կանչիր.



Ես մօտենալ չեմ յանդրգնում,  
Թէ արժանի բան կայ քեզնում,  
Թէ արդար ես, նա կը բացուի,  
Խաչ-Պատրազին դուրս կը թռչի.  
Եւ կը կանգնի քո աջ թևին»:

Գնաց չոզեց մօտ սնդուկին.

Աստուած կանչեց,

Շատ աղաչեց,

Մնդուկի դուռ յանկարծ բացուեց,  
Խաչ-Պատրազին թռաւ կանգնեց  
Ն՛նկչոգ Դաւթի աջ թևին.

Հեծաւ Քուռիկ-Չալալին,

Հագաւ իր հօր,

Ձուքսը բոլոր:

Բայց քամարը Դաւթի մէջքով

Քառասուն սլատ աւել եկաւ.

Քարշ էր գալիս թուրը գետնով,

Թագը գլխից ցած կախուեցաւ.

Այսպէս զուգուած ու զարդարուած

Մանուկ Դաւիթ ձիուն հեծած,

Գնաց կանգնեց յետեր տան:

«Ի՞նչ կ'ասէ ինձ արդեօք Յովհան»:

Յովհանն ասաց.

«Ափսոս գնաց,

Գնաց, ափսոս Սասնոյ տնից

Մհերի զուքս մեր սարերից.

Հրրեղէն ձին, կապէն հազի,  
Թուր Խաչ-Պատրազի, կայծակի»:

Դաւիթ սաստիկ վիրաւորուեց

Եւ բարկացած թուրը հանեց.

Յովհան վախեց,

Խօսքը փոխեց:

«Հազար ափսոս թառլան Դաւթին,

Ա՛խ, թառլան Դաւթին»:

— «Սուր կը շողար քո խեղճ վզին,

Թէ այդ խօսքը դու չասէիր

Եւ իմ անուն չը յիշէիր»:

Ո՛հ, զգացուած նա արտասուեց,

Իջաւ ձիուց, ձեռքն համբուրեց.

Հօրեղբայրն էլ խաթրը առաւ,

Խրատելով ձամփայ դրբաւ:

\*\*\*

Դ

աւիթ երգեց բարձր ձայնով.

«Ազիզ քոյրեր, մնաք բարով,

«Որ եղբօր տեղ ինձ սիրել էք.

«Մնաք բարով, գթոտ մայրեր,

«Որ ձեր գրկում ինձամեկ էք՝

«Տալով անուշ ինձ զգուանքներ.



«Մ'նաք բարով, ս'վ դրացիք,  
 «Մեծ ու պատիկ իմ գիւղացիք,  
 «Որ լսել եմ ձեր լաւ խօսքեր.  
 «Մ'նաք բարով, հանդ ու դաշտեր,  
 «Որ օրրանն էք եղել կեանքի՝  
 «Իմ մանկական զբօսանքի.  
 «Մ'նաք բարով, դնում եմ ես  
 «Լիւռայ դաշտը կռուի հանդէս,  
 «Թշնամու դէմ վօթել արիւն՝  
 «Ձեռք բերելու մեծ յաղթութիւն...»



**Յ**ովհանն ասաց. «Լսիր, որդի».

Երբ վճիռը ազգի բաղդի  
 Քեզ մղում է պատերազմի,  
 Եւ չես ուզում, որ թշնամի  
 Քեզ ծաղր անէ, յաղթող լինես,  
 Իմ խրատը, դու լաւ կ'անես՝  
 Ականջ դրնես.  
 Ճանապարհին  
 Ուր որ քո ձին  
 Իր ծնկները գետնին զարկի,  
 Ճամփէդ էլ մի՛ շարունակի.  
 Այնտեղ իսկոյն դու ցած կը գաս,

Ձին կը կապես ու կեր կը տաս.  
 Չորս ոտի մէջ տեղ կը շինես,  
 Ինքդ էլ հանգիստ քուն կը մտնես:  
 Որ դաշտ կ'երթաս, միջին դաշտի  
 Կը տեսնես մի սիւն պողպատի.  
 Հայրդ կռուի միշտ դուրս գալիս,  
 Նրան թրով զարկ էր տալիս.  
 Թէ կտրում էր՝ բանն յաջողում,  
 Թէ չէ՝ սուս-փուս տուն էր դառնում:  
 Դու էլ այնպէս  
 Մըհերի պէս  
 Բաղդըդ փորձիր,  
 Չգո՛յճ գործիր:



**Ք**ըչեց, գնաց ու սլացաւ.  
 Կաթնաղբիւրին երբ մօտեցաւ,  
 Ձին ծնկները զարկեց գետնին.  
 Ասպանդակով պինդ կողերին  
 Խփեց Դաւիթ բարկացած, չար,  
 Չարդեց, կտորեց մի ողնաշար,  
 Ասաց. «Մի ժամ ճամփայ եկել,  
 Ի՛նչ ես այդպէս շուտով յօգնել»:  
 Ձին Աստուծոյ հրամանով



Խօսուեն լեզու ստանալով՝  
Շատ բարկացաւ. «է՛հ, բարեկամ,  
Արեգակով՝ ինչպէ՞ս ես՝ տամ՝  
կրակ դառնաս. բեր քո միտը  
Հօրեղբօրդ այն խրատը»:  
Դաւիթ զղջաց ու վեր եկաւ,  
Կաթնաղբիւրի շուր տուաւ,  
Ողնաշարը լուաց իստակ,  
Յետոյ կապեց մի ծառի տակ,  
Տուաւ նրան կերակուր՝

Խոս ու շուր:

Ինքն էլ լողաց ջրի ափում,  
Շորը հագաւ. կանաչ տափում  
Նստեց մի կուշտ հաց կերաւ,  
Այն խրատը միտը բերաւ.  
Մտաւ ձիու փորի տակ,  
Չորս ոտքի մէջ տեղ շինեց,  
Պառկեց, մինչև աչքը փակ  
Նինջը կոխեց ու քրնեց:  
Մի ժամ քրնեց. երբ զարթնեց,  
Ինքը իրեն նկատեց՝  
Այնպէս լցուել, հաստացել,  
Հասակն առել, մեծացել,  
Այնպէս զվաթ՝\*) ստացել,

\*) Ոյժ, զօրութիւն:

Որ ինքն էլ էր զարմացել:  
Նոր յարմարուեց գլխին թագը,  
Քառսուն լիտը լի բամբակը  
Հանեց միջից. մէջքի գօտին,  
Որ քառսուն պատ էր գալիս,  
Մի պատ դարձաւ. թուրը գետին,  
Որ կողքիցը քարչ էր տալիս,  
Այժմ հասաւ մինչ ծնկները.  
Չափսի եկան և միւսները:

\*~\*~

Մէջ-առաւօտ երբ սարերին  
Ցնցող զարկեց լոյսը բարին,  
Դաւիթ սրտանց աղօթք արաւ,  
Ձին հեծնելով քշեց, թռաւ.  
Թուաւ կանգնեց մօտ այն սլւնի,  
Թուրը քաշեց որ կէս անի.  
Միւսը կտրուեց իսկոյն այնպէս,  
Ոչ թէ պողպատ, պանիր կարծես.  
Բայց կտորը կպած մնաց  
Ու վայր չընկաւ: Դաւթին թուաց  
Թէ չը կարաց կտորել սիւնը,  
Անիծեց իր զօրութիւնը.  
Չեռնիկ, ձեռնիկ, դու չորանաս,



4814-2010



«Որ այդ սիւնը չը կտորեցիր.  
«Աչքիկ, աչքիկ, խաւար մնաս,  
«Դու այս բանը չը տեսնէիր»:  
Նա մտածեց տուն դառնայ,  
Ճանապարհից յետ գընայ:

Մէկ էլ յանկարծ նա մօտեցաւ,  
Փչեց սիւնին. նա շարժուեցաւ  
Ու կտրածը ընկաւ գետին.  
Դաւիթն ասաց բերկրանք սրտին.  
«Ձեռնիկ, ձեռնիկ, դու կանաչես»,  
«Որ կտորեցիր ալմազի պէս.  
«Աչքիկ, աչքիկ, լինես շղան—  
«Որ տեսնում ես բարի նշան»:



**Չ**ին քչեց գնաց մի սարի գլուխ.  
Տեսաւ այնտեղից, ինչպէս հրաբուլիս,  
Խոնուած են մարդիկ Լիւռայ գոռ դաշտ,  
Կրակ են շանթում, սրեր խաղացնում.  
Այստեղ ու այնտեղ խիտ-խիտ բանակներ,  
Շատերի ձեռքին սրած դանակներ.  
Եւ ինչքան աստղեր բռնած երկկնքը՝  
Վրան է զարկել Մսրա-Մէլիքը:



**Չ**տանալով Դաւիթն ասաց.  
«Ո՛վ բարերար օրհնեալ Աստուած,  
«Ա՛խ, ի՞նչ անեմ, անթիւ են մարդ.  
«Եթէ նրանք կորեկի արա,  
«Իսկ ես դառնամ մի սուր մանգաղ,  
«Հնձել, անել թրիս մատաղ,  
«Ես չեմ կարող. եթէ բամբակ՝  
«Իսկ ես լինիմ բոց ու կրակ,  
«Այրել նրանց ես չեմ կարող.  
«Եթէ դառնան դառներ մայող,  
«Իսկ ես մի գայլ քաղցած փորով,  
«Ես չեմ կարող յաղթել զօռով:



**Ք**ուռիկ-Չալալին ասաց. «Տնաւեր,  
Ի՞նչ ես դարդ անում. մարտի հրաւէր  
Դու գնա անվախ, քանի կենդան եմ,  
Նեղուծիւններում քեզ քեօմակ \*) կ'անեմ.  
Ինչքան քո թուրը մարդիկ սպանի,  
Մենակ իմ պոչը դատաստան կ'անի.  
Ինչքան քո թուրը մարդիկ կոտորի,  
Այնքան էլ մենակ իմ շունչը կ'այրի.

\*) Օգնել:



Ինչքան վէրք ու մահ հասցնէ քո թուր,  
Այնքան ոտքերս կ'անէ շարդ-փշուր...»:



**Գ**աւիթ բարձր Աստուած կանչեց,  
Սրտից դարձեալ խոր հառաչեց.  
«Ա՛խ, ի՛նչ անեմ, Տէր իմ Աստուած,  
Արդեօք ինձ ի՛նչ բաղդ ես տուած.  
Թէ այստեղից զնամ գաղտնի,  
Վախիս համար բերան կ'ընկնի.  
Թէ Դաւիթը եկաւ գող  
Եւ էլ զնաց սիրաւ գող.  
Թէ աշկարա՛ այնքան զօրքից  
Վախենում եմ շատութիւնից.

Պահ, պահ, ինչքան ճերմակ վրան  
Դաշտ է բռնել, կ'ասես ձմրան  
Ձիւն է եկել  
Ու ճերմակել»:

Ձին մտրակեց, էլ չը նայեց,  
Առաջ անցաւ ու սլինդ կանչեց.

«Ով քնած է, թող շուտ դարթնի  
«Ով արթուն է, թող շուտ կանգնի.  
«Ով կանգնած է, կապի զրահ,  
«Ղոջաղ կենայ, պատրաստ է մահ,

«Թող ձին թամբի, շուտով հեծնի,  
Չասէք՝ Դաւիթ եկաւ գաղտնի,  
Գնաց գող,  
Սիրաւ գող:



**Ք**շեց նա ձին այս ու այն կողմ  
Փոթորկալից ինչպէս հողմ.  
Երկու գլուխ որ անցաւ,  
Դաշաւը կարմիր ներկուեցաւ:  
Թափած արիւն մի գետ դառաւ,  
Շատ զիակներ քշեց, տարաւ:  
Մի շատ փորձուած  
Աշխարհ տեսած

Այն զօրքի մէջ կար ծերունի.  
«Դաւիթ մեզ հետ ի՛նչ գործ ունի.  
Ճամփայ տուէք, զնամ խնդրեմ,  
Այս խեղճերին մահից փրկեմ»:  
Եւ ճղելով մեծ բազմութիւն,  
Ասաց Դաւթին. «Ի՞նչ ես սուրբիւն  
Արել այսքան խեղճ ու նաշար.  
Մարա-Մէլիք—էն մեծ լաշար—  
Ծեծելով է բերել այստեղ,  
Հիմի սրանք ի՛նչ ունեն մեղ,  
Որ ընկնում ես դու մեղքի աակ.  
Եղբր փրկող մի հրեշտակ:



Մի կոտորիք, արի խղճն.  
 Մէկը ն[թիւ] \*) մէկը փեսայ,  
 Մէկը որդի իր միամօր,  
 Մէկն օջախի աշխատաւոր.  
 Որը թողել տանը անտէր,  
 Քաղցած, ծարաւ մերկ մանուկներ,  
 Որն էլ հարսին, նըշանածին՝  
 Ջուր է կտրել աչքը ճամփին:  
 Քանի քանի քիւլփաթների \*\*)   
 Ռիզն \*\*\*) ես կտրում. խնդրեմ ների.  
 Թէ կտրիճ ես, ափաշքարա  
 Մէլիքի հեա կռիւ արա:  
 Լսիր ծերիս, սիլ քաջ հսկայ,  
 Գիտեմ սրտիդ խղճմասնք կայ.  
 Կուռդ դաւաճ, թուրդ կտրոճ,  
 Ջուրդ առաջ խալիսը ստրուկ...»:  
 Դաւիթն ասաց.«Օրհնեալ բերան,  
 Ես ներեցի քո ծերութեան.  
 Լաւ ես ասում, բայց ինձ ց'յց տուր՝  
 Ձեր Մէլիքը թագնուել է ուր»:  
 —Նա նստած է այն վրբանում,  
 Որի միջից ծուխ է ելնում.  
 Բայց դա ծուխ չէ, բուզ կը հանի.  
 Ծովանման իր բերանի...»:

\*) Որը: \*\*) Օղլուչադ: \*\*\*) Ապրուստ:

Դաւիթ սրտոտ, համարձակ,  
 Կայծակի պէս շանթարձակ  
 Քշեց, կանգնեց, ինչպէս մի քաջ  
 Մէլիքի մեծ չաղրի \*) առաջ:  
 Այնտեղ այնպէս ծղրտաց,  
 Կարծես երկինք դղրդաց.  
 «Պահապաններ, պահապաններ,  
 Բացէք լալկան ձեր բերաններ,  
 Դուրս կանչեցէք ձեր Մէլիքին,  
 Ի՜նչ է արիւն կապել զօրքին.  
 Թող գայ ինքը կռուի մէյդան,  
 Ոյժը փորձի դէմ յանդիման.  
 Գլուխ առել, ի՜նչ է կորել,  
 Թէ անմահ է—մահ եմ բերել»:  
 Ասացին. «Դեռ քնած է խոր,  
 Սովորութիւնն է քնել եօթն օր,  
 Երեք օր է նոր անց կացել,  
 Անյարմար է զարթեցնել»:  
 Դաւիթ գոռաց. «Իգուր խօսիլ,  
 Հարկաւոր չէ. չեմ սպասիլ.  
 Խալսին արեան ծովում թողնի՝  
 Ինքը չաղրում հանգիստ քնի...»:



\*) Վրան:



**Մ**արդիկ հնար մըտածեցին.  
 Վախից ելան կարմրացրին  
 Շամփուրները թէժ կըրակին  
 Ու զարկեցին ոտնատակին:  
 Խոր մըռափած այն մեծ հըսկան  
 Մոնչալով ինչպէս գաղան,  
 Ասաց.—Տեղս լաւ չէք շինել,  
 Ձեզ ցոյց կը տամ, անպիտաններ,  
 Օ՛ֆ, անիրաւ մոծակ ու լու  
 Խանգարում են ինձ քընելու»:

Դաւիթն ասաց. «Վեր կաց, դէ վեր՝  
 Ես եմ այստեղ, չը կան լուեր»:  
 Բայց Մէլիքը շուռ-մոռու եկաւ,  
 Հանդարտ կերպով խոր քունն ընկաւ:  
 Դաւիթ գոռաց ինչպէս մի թոփ.  
 Եւ այս անգամ գուլթանի խոփ՝  
 Հըգեհավառ հընոցի մէջ  
 Շիկացրին և հըրաշէջ  
 Ճնճըստալի մերկ թիկունքին  
 Մօտեցըրին, բայց նա մտքին  
 Ծաղը էր կարծում ու վեր կացաւ.  
 Բայց առաջը յանկարծ տեսաւ  
 Եօթ տարեկան սիրուն տըղայ  
 Մի հրեղէն ձիու վըրայ

Մուր ասպարում փայլիլելիս,  
 Ձին բարձրաձայն խրինջալիս.  
 Որ գետինն էր ոտքով տոփում,  
 Չազրի վրայ և հող թափում.  
 Մէլիք կարծեց, որ փըշի,  
 Դաւիթ տեղից կը թռչի.  
 Եւ նա փչեց բերանը բաց,  
 Դաւիթն ասաց.  
 «Ի՞նչ ես անում, վեր կաց կռուենք,  
 Լիւռայ դաշտը արիւն ցողենք.  
 Չօրքդ բալոր թրիս գերել,  
 Թէ անմահ ես, մահ եմ բերել»:  
 Մէլիքն ասաց. «Ձիուց իջի՛ր,  
 Առաջ արի մօտըս նստիր.  
 Քիչ հաց ուտենք, զրոյց անենք,  
 Յետոյ կռուի մենք պատրաստուենք»:  
 Նա միամիտ ձիուց իջաւ,  
 Ձին նեղացաւ, հեռու փախաւ,  
 Որովհետեւ իմաստուն էր,  
 Մի գաղտնիք կար՝ իմանում էր:  
 Բռնակալը անագին խոր  
 Ծածուկ կերպով փորել էր հոր,  
 Մի քառասուն նետաչափով  
 Եւ ծածկել էր թաղիքներով:  
 Մանուկ Դաւիթն խաբեցին



Եւ ձիուցը ցած բերին,  
 Ձին բարկացաւ, կատաղեցաւ,  
 Թէ նա անփորձ ինչո՞ւ իջաւ.  
 Մոայլ պնչից հանելով մուխ  
 Փախաւ դէպի սարի գլուխ.  
 Դաւթին՝ սիրով կեղծ ու պատիր՝  
 Ճաշ բերեցին. «Հանգիստ նստիր»:  
 Փարատեցին բոլոր կասկած.  
 Բայց նստելով՝ Դաւիթ յանկարծ

Ընկաւ հորը:

«Թող ոսկորը

Այնտեղ փախի

Գոռոզ Դաւթի.

Հա՛, հա՛, հա՛, հա՛.

Տեսէք ահա՛.

Սա էր ուզում

Լիւռայ զաշտում

Ինձ հետ կռուի

Եւ վախեցնի

Երեսայական իր տեղով»,

Ասաց Մէլիքն ծիծաղելով:

\*-\*

**Խ**աւար գիշեր վրայ հասաւ,  
 Ձէնով-Յովհան երազ տեսաւ.

Մարայ աստղը պայծառ լուսով,

Սասմայ աստղը ամպ երեսով.

Ասաց. «Կնիկ, վեր կաց քնից,

Մեր Դաւիթը զնաց ձեռքից.

Սարսափեցայ,

Երազ տեսայ.

Մարայ աստղը պայծառ լուսով,

Սասմայ աստղը ամպ-երեսով»:

Կնիկն ասաց. «Մի խանգարի

Անուշ քունըս. քո տունն չաւրի,

Դու քեզ համար քունն ես մտնում

Ուրջի՞ համար երազ տեսնում»:

Յովհանն էլի պառկեց, քնեց,

էլի քնեց շուտով զարթնեց.

«Վեր կաց, այ կին,

Տեսայ կրկին

Մի անմուրազ

Նոր գէշ երազ.

Մարայ աստղը պայծառ, լուստտ,

Սասմայ աստղը մարելու մօտ»:

Կնիկն ասաց. «Տօ՛, տնաքանդ,

Քրնի վախտը ի՞նչ ես զարդանդ \*):

Բերում ջանիս ու չես թողում

Աչքըս խփեմ. ի՞նչ ես ուզում»:

\*) Սարսափ:



Յովհանն նորից քուն մտաւ,  
 Բայց այս անգամ ինչ տեսաւ.  
 Մտայ աստղը թիւշ. \*) եկաւ  
 Սասմայ աստղին կուլ տուաւ:  
 Կանչեց. «Այ կին,  
 Սպանեցին  
 Մեր խեղճ Դաւթին.  
 Վայ Սասունին...»:

Կնիկն ասաց. «Հերիք չեղա՛ւ,  
 Էս մարդ թամամ զահլայ տարաւ.  
 Դաւթին հիմի, ո՛վ իմանում,  
 Ո՛ր հարսի ծոց քէֆ է անում»:

Շատ բարկացաւ Յովհաննը  
 Պինդ աքացեց կնկանը.  
 Կինը զարթեց,  
 Ճրագ վառեց:



**Յ**ովհանն ձայնեց անհամբեր.  
 «Շուտ գէնքերս զնա բեր»:  
 Կինը բերաւ: Դրնաց զոմ,  
 Մտաւ, մութն էր, վառեց մոմ,

\*) Ուղղակի:

Ձեռքը տարաւ ձիանց մէջքին.  
 Առաջ հարցրեց Սպիտակին.  
 — «Ե՞րբ կը հասցնես ինձ Դաւթի մօտ».  
 «Ղօչախ նստես՝ մինչ առաւօտ»:  
 — «Հառամ լինի է՛ն կերը,  
 Որ մըտել է է՛ն փորը»:  
 Հարցրեց Կարմրին. «Ե՞րբ կարող ես  
 Մեր խեղճ Դաւթի կոուլին հասցնես»:  
 — «Մի ժամ»:  
 — «Այ հառամ

Լինի է՛ն կերը,  
 Որ մըտել է քո փորը»:  
 Մօտենալով Սևուկին  
 Ձեռքը տարաւ նա մէջքին,  
 Բայց փոր գետնին չը զարկեց  
 Նրանց նման չը ճըկոեց:  
 «Ասա՛, սևուկ, երբ կը տանես,  
 Դաւթի կոուլին տեղ կը հասցնես»:  
 Սևուկն ասաց. «Թէ կարենաս  
 Թամբելուն պէս պատրաստ կենաս,  
 Ոտքդ խկոյն զանգուն \*) զնես  
 Եւ մինչ միւսն էլ միւսին տանես»:

\*) Սպանդակ:



Աչքդ երկու ըաց ու խուսիկն  
Քեզ կը հասցնեմ Դաւթի կուռին»:



**Յ**ովհանն ձիուն թամբեց, հեծաւ,  
Հէնց մի ոտը զանգուն դըրաւ,  
Մինչև շուռ գար ու միւս ոտն էլ  
էն միւս կողմի զանգուն տանէր:  
Ձին հրեղէն  
Թուա դէս, դէն,  
Կայծակի պէս սլացաւ,  
Սարի գլուխ բարձրացաւ:  
Երբ Յովհաննը երևաց,  
Քուռիկն այնտեղ խրինջաց.  
Յովհանն ասաց. «Օ՛, յաղթուած է,  
Մեր Դաւթիր սպանուած է»:  
Այնպէս ձայնեց ու գոռաց,  
Որ դաշտ, անտառ դըրդաց.  
Նրա ձայնից ահաւոր  
Դմբդմբացին սար ու ձոր.  
«Հէյ, հէյ Դաւթ,  
Սասնայ իգիթ,  
Աղօթք կարդա՛,  
Սուրբ Մարութայ,

Աստուարածնին  
Սաչ-Պատրազին,  
Որ աջ թևին»:



**Կ**անչի ձայնը սարի գլխից  
Հորում Դաւթի ախանջն ընկաւ.  
Դու մի ասիլ նրա մտքից  
Հեռու փախել ու չիմացաւ  
Պատրազինի գորութիւնը.  
Գլխին խփեց տաք արիւնը.  
Ձայն ճանաչեց  
Ու աղաչեց.  
«Ե՛ս Մարութայ  
Աստուարածին,  
Սաչ-Պատրազին,  
Որ աջ թփին»:  
Ասաց, իրեն թափահարեց  
Եւ ոյժերը մի հաւաքեց.  
Աստծոյ կամբով երկնի խորքեր  
Տրաք-տրաքեցին. պինդ կտորներ  
Շղթաների կախուեցին  
Եւ հորի մէջ շարուեցին.



Դաւիթ բռնեց, թուա հորից,  
Մէլիքի սիրտ պատուեց նորից:

\*\*\*

**Յ**ովհան կանչեց բարձրից սարի-  
«Դաւիթ, Դաւիթ, այստեղ արի»:  
Դաւիթ տեսաւ հօրեղբայրն էր.  
Ներքին յոյզից տաք համբոյրներ  
Հեղեղեցին նրանց աչքեր  
Արտասոււնքի ջերմ կաթիլներ:  
Դաւիթ ձիուն մօտեցաւ,  
Նա աւելի բարկացաւ.

Խրինջում էր

Եւ տոփում էր

Ոտքով քարին:

Ժեռ ու լեռին:

Յովհան ինքը կանչեց իր մօտ  
Շողոմելով ձայնով ծանօթ.  
Ձին մօտեցաւ: Նա շոյելով  
Դաւիթին յանձնեց աղաչելով.  
«Թող ես էլ դամ պատերազմի»:  
— Ի՞նչ, ուզո՞ւմ ես, որ թշնամի  
Ինձ ծաղր անի  
Ու անուանի

Վախկոտ նապաստակ,  
Ձէ, կ'երթամ մենակ.  
Եւ ես այս անգամ  
Նրան ցոյց կը տամ՝  
Ում հետ գործ ունի.  
Ի՞նչպէս կը պրծնի  
Ինձ նման գժից՝  
Կատաղած վրէժից»:

\*\*\*

**Պ**տոյաներով նա չափ գցեց  
Եւ ձին ուրախ խաղացրրեց  
Քիւռայ դաշտում, ուր բեր գօրքը  
Նրան նայում, անում գովքը.  
Փիւշ սլացաւ զիւլի \*) նման  
Մէլիքի դէմ ու յանդիման.  
Ձին մտել էր քափ ու քրտինք,  
Պրինջոցից թնդում լերինք.  
Դյապէս շաղրին դիպաւ թափով,  
Չը Մէլիքը մեծ սարսափով  
Հեղից յանկարծ ծլուսդ էլաւ.  
Յայց առաջին նա ի՞նչ տեսաւ:

\*) Գնդակ:



Զիուն հեծած Սասմայ ծուռը \*),  
 Գուրգը, նետը ձգած կուռը.  
 Մաքունն ասաց. «Ո՞նց ազատուեց,  
 Եարաբ հորից ո՞վ դուրս հանեց»:  
 Դաւիթն ասաց. «Մորա-Մէլիք,  
 Էն անգամին ինձ խաբեցիք,  
 Հիմի գլխիդ ճարը տես,  
 Ինչպէ՞ս պէտք է ազատուես»:  
 Մէլիքն ասաց. «Դեռ դու արի  
 նստենք այստեղ կեր ու խումի»:  
 Դաւիթն ասաց. «Ձեմ կարող գալ,  
 Վեր կաց, կ'ուզեմ մեծ կոխ տար»:  
 Ասաց. «Կոխն օրէնքով՝  
 Հերթով է, թէ՛ հէնց զօռով»:  
 Դաւիթն ասաց. «Հերթով է»:  
 — «Բայց մեզանից մեծն ո՞վ է»:  
 «Դնւ ես, Մէլիք, քոնն է հերթ»:  
 Բայց Մէլիքի թոք ու լերթ  
 Բողազումը չորացած,  
 Դաւիթի տեսքից վախեցած,  
 Հազիւ մի կերպ վեր կացաւ,

\*) Մուռ կոչուում է գիծ: Այդ պատճառով արաւ  
 յայտիչ է Սասունի հայ ժողովրդական դիւցազնակ  
 ամբողջ վէպի ընդհանուր վերնագրի կոչումը.  
 «Սասմայ ծուռը» (Սասունի գժեր):

Երեք ժամ տեղ հեռացաւ,  
 Որ այնտեղից գայ խփի:  
 Դաւիթն առանց սարսափի  
 Եկաւ նստեց մէյդանը,  
 Գլխին բռնած ղալխանը \*)  
 Տակը խաչի նշանը.  
 Հեռուից եկաւ գագանը,  
 Դէմքը թթուած, կախ մըռուզ,  
 Այնպէս Դաւիթին զարկեց գուրգ,  
 Որ ամպ-փոշի վեր տարածուեց,  
 Արեգակի երես բռնու...  
 Մէլիքն ասաց. «Չքանա՛ս,  
 Ոնց հող էիր, հող դառնա՛ս»:  
 Դաւիթն գոռաց. «Շարունակիր,  
 Ես այստեղ եմ, էլի զարկիր.  
 Հաւատամ ու խոստովանիմ,  
 Ո՞վ մեծագործ հաւատարիմ  
 Սուրբ Մարութայ Աստուարածին,  
 Ով զօրաւոր Խաչ-Պատրազին,  
 Քեզ պէս զօրեղ պաշտպանի տակ  
 Մնացել եմ ես անվրտանգ.  
 Կարծես նստած մեծ վրանու՛մ  
 Հանգիստ փլաւ անուշ անու՛մ»:  
 \*—\*

\*) Վահան:



**Ե**րեք անգամ գնաց եկաւ

Ու գուրդ գարկաւ.

Վեր բարձրացաւ ամպ ու փոշի,  
Դաշտն էր բռնել բուղ—գոյորջի:

Քամուց բռնած արտի նման  
Գետին շարժվում ակեծածան.

Նա բղաւեց. «Չքանա՛ս,

Ոնց հող էիր; հող գառնա՛ս»:

— «Ես այստեղ եմ», Դաւիթն ասաւ:

Հերթը հիմի նրան հասաւ.

Բայց սկսեց յամառել

Մորա-Մէլիք՝ չը նստել:

Մեղադրում էր խալիս բոլոր,

Թէ «Այս բանում մեղաւոր;

Անօրէն ես դու վարվում,

Որ քեզ պատիւ չի բերում»:

\*\*\*

**Մ**որա-Մէլիք ամօթից

Վահան առաւ ու նստեց.

Այդ միջոցին ամբոխից

Մայրը եկաւ, զրպարտեց,

Լաց լինելով սրտակէզ.

«Դա եղել է եղբայր քեզ,  
Դաւիթ, մեղք է, մի գարկիր.

Սուգ մի կապիր մեր երկիր»:

Դաւիթ խոցուեց այդ խօսքից.

«Չեմ վախենում ես մեղքից,

Երբ արդար է օրէնքը.

Ինչո՞ւ չասիր այդ խօսքը

Երբ նա ինձ էր հարուածում.

Հիմի նոր ես մըտածում:

Բայց քո խօսքը թող լինի,

Երեք հարուած տամ պիտի,

Մէկը փէշէշ Աստուծուն,

Մէկն էլ ցաւող քո սիրուն,

Ղր դու մայրն ես Մէլիքի

Եւ խընամող իմ կեանքի.

Սկ երրորդը՝ իմ բաժին՝

Վեպհական է իմ ուժին,

Զիտ՝ հարուածեմ անխնայ,

Վամ նա մեռնի, կամ մնայ»:

Ո՛յ, Մորատէր, Մորա-Մէլիք,

Քախտը եկաւ պարտքդ տալիք.

Ե՛ք, պատրաստուիր գուրդ եմ գարկում,

Եւ մարմինըդ ողջ խորտակում»:

Մէլիքն ասաց. «Խնդիր ունեմ,

Ե՛ք որ լսես, պիտի պսեմ»:

*Ստորագրում*



— «Դէ, ի՞նչ ունիս, ասան տեսնեմ»:

— Մի քառասուն կանգուն կ'ուզեմ

Այստեղ մի խոր հոր փորել,

Ինքս էլ գնալ, մէջն մանել,

եւ քառասուն շաղպաքար

Քաշել պատին մեծ պատեշար

եւ այնքան էլ գոմշակաշին

Գցել, ծածկել այդ քարերին,

Յետոյ զարկիր»:

— «Դէ, լաւ փորիր»:

Մորա-Մէլիք այնպէս արաւ.

Մայրը կրկին առաջ եկաւ.

— Դաւիթ, յիշիր իմ հացն ու աղ,

Քո արեին, գլխին մատաղ,

Չէ որ ես քեզ ծիծ եմ տուել,

Քեզ ման ածել ու խտտել:

Այդ մէկ զարկն էլ ինձ բաշխիր,

Ե՛կ, ծծերիս խընայիր»:

Մէկէլ քոյրը առաջ եկաւ,

Մըղկտալով ոտքերն ընկաւ,

Թէ «Դաւիթ ջան,

Ես քեզ դուրբան,

Կամ ինձ բաշխիր, կամ խեղճ մօրս.

Քեզ սիրել եմ ոնց եղբօրս,

Հով սարերում ման եմ ածել,

Բարուր արած քեզ շտապել»:

— «Կորէք դէնը, Դաւիթ գողաց,

էլ բաշխելու բան չը մընաց.

Ես եմ, Աստուած և այս մէկ զարկ,

Մասուն գնամ ձեռքս դատա՞րկ»:

Նորից կանչեց

Ու աղաչեց.

«Ո՛վ Մարութայ Աստուարածին

Խաչ-Պատրազին,

Որ աջ թեկին»:

Գնաց եկաւ գուրգը զարկեց,

Քառսուն գոմշի կաշին պատուեց.

Եւ քարերի կտրեց շարը,

Եօթ գազ խըրեց գեանի խորը,

Չարկը գլխից ոտքին անցաւ.

Չօրքը ապշած սասանեցաւ.

Մէլիքն ասաց. «Ես այստեղ եմ»:

Դաւիթն ասաց. «Այն, զիտեմ,

Քեզ մի թափ տո՛ւր,

Թափահարեց, խրդափշո՛ւր,

Մի կտորը ընկաւ այստեղ,

Միւսը այնտեղ:





Ուրը Սասունն ողջ թնդում էր,  
Տօնն և հանդէսն և խնդում էր.  
Էլ ի՞նչ ասենք Դաւթի բախտին՝  
Գնաց նստեց Մսրայ թախտին:

—  
Խանդուղ-Խաթուն —

Չայն, դրդոնց աշխարհ ընկաւ  
Դաւթի յաղթող փառք ու համբաւ.  
Կապուտկողի մեծ Ամիրան  
Մի գեղեցիկ ու անաման  
Աղջիկ ունէր՝ Խանդուղ-Խաթուն.  
Սիրահարուած գիշերն արթուն,  
Տանը նստած՝ իր նամուսին՝  
Նա մըտածեց կին-ամուսին  
Գընալ Դաւթին,  
Որի փառքին  
Շատ աղջիկներ  
Զգալով ուէր՝  
Նախանձում են  
Եւ ուզում են  
Ոտքը զընալ  
Ու տիրանալ:  
Ահա Խաթունն մի առաւօտ

Երկու աշուղ կանչում է մօտ,  
Փող է բաշխում, թէ «Գընացէք,  
Իմ գովասանք դուք երգեցէք  
Դամբումներով Դաւթի կշտին,  
Որ ինձ սիրով գայ առնի կին,  
Եւ յայտնեցէք, որ իշխաններ,  
Շատ անուանի պահլաւաններ  
Փափուկ սրտիս կ'ուզեն տիրել,  
Բայց Դաւթին եմ անկեղծ սիրել»:

\* \* \*

Ուրախացած աշուղները  
Հետը վերցրին դամբումները,  
Դէպի Սասուն ճամփայ ընկան  
Ու ման գալով առաջ եկան,  
Պատահեցին անծանօթի.  
— «Ա՛յս է քաղաք քաջն Դաւթի»:  
Զէնով Յովհանն էր այն անծանօթը.  
— «Հնա՛, պատասխանեց,— ես եմ Դաւթի»:  
— «Թէ որ դու ես, նստիր տեսնենք,  
Մեր Խաթունի գովքը անենք»:  
Սաղը առան,  
Իլբիւլ դառան,  
Ծնգծնդացրին,  
Կլկլացրին



«Կապուտկողի Ամիրան  
 Սաղ աշխարհ է, մի բերան.  
 Աղջիկ ունի աննման,  
 Ծաղկափթիթ, դուրեկան,  
 Ձիրք է տուել բընութիւն,  
 Գեղեցկութիւն իմաստուն,  
 Սպիտակ է ինչպէս ձիւն,  
 Շունչը՝ գարնան սօսափիւն,  
 Նրբութիւնը՝ բամբակի,  
 Տեսքը՝ փայլը արեգի,  
 Սիրտը նման աղաւնտուն,  
 Սիրելի է իր անուն:  
     Յօնքերը սաթ,  
     Փայլուն արծաթ,  
 Թուխ-թուխ մագի հիւսերով,  
 Կարծես քաշած ղալամով.  
     Աչքերը վառ,  
     Սիրուն, պայծառ,  
     Երկնի կապուտ,  
     Ծովի զմրուխտ.  
     Զուքսը յարմար,  
     Կուրծքը մարմար,  
     Վարդ շրթունքին,  
     Ժպիտ դէմքին.  
     Ճակատը լայն,

Որում միայն,  
 Խելքի աշխարհ,  
 Սէրի գոհար,  
 Եւ մեղրածոր  
 Թշեր խնձոր,  
 Այնպէս վառվում,  
 Ու կարմըրում,  
 Կարծես մայսեան  
 Նըններ լինին  
 Եւ վաղորդեան  
 Արշալոյսին  
 Օդն է կարծես,  
 Պայծառատես  
 Բռնուած բոցեր,  
 Ծիրան գոյներ:  
 Նա որ ժըպտում,  
 Վարդ է նստում  
 Շրթունքներին  
 Եւ երկնքին  
 Ասող է ցոլում,  
 Կարծես ծըլում  
 Սարում, դաշտում,  
 Մարդ-արօտում  
 Արվան ու սիղ,



Սմբուլ, նարգիզ \*).

Նրա բոյրը  
Եւ համբոյրը  
Շունչ է վառում  
Սիրտ է եռում.  
Իսկ այտերի  
Փոսիկները,  
Տոսիկների  
Շարժուածքները.  
Այդ ամենը  
Կեանք յիշեցնում  
Ու բերանը  
Խօսք է թոցնում,  
Թէ «երանի  
Աչքին քո մօր,  
Որ գեղանի  
Ու բաղբաւոր  
Քեզ պէս ունի  
Բոյ չինարի  
Ու գեղեցիկ,  
Զարման աղջիկ...



**Ա**մբողջ կեանքում  
Եւ հայեացքում

\*) Ծաղիկների անուններ են:

Սէր է բուրում  
Ու թրթում  
Եւ նամուսից  
Լոյս երեսից  
Ամօթ ծլում.  
Նա ծլկում.  
Երգ է հրնչում  
Կանաչ բաղչում,  
Ինչպէս սոխակ,  
Շատ գեղունակ...  
Սիրտը զթով,  
Բարութեան ծով,  
Աղբատներին,  
Կրճատներին  
Տալիս է հաց,  
Սրբում է լաց...  
Ո՞վ չէ լրսում,  
Ո՞վ չէ խօսում  
Մեր Խաթունի  
Հազարունի  
Լաւութիւնը.  
Պատմութիւնը  
Աշուղների  
Բերանների  
Զուրն է տանում,



Գովասանում  
Նրա գործքը,  
Սէրն ու խօսքը:



**Ի**նչպէս պատմենք  
Նրկարագրենք  
Զրոյց-խօսքով  
Մազի երգով  
Մեր Խաթունի  
Բընութիւնը  
Եւ զեղունի  
Յատկութիւնը:  
Մաքնւր հոգի...  
Նա ոչ ոքի  
Չոռ չէ ասել  
Եւ վընասել:  
Ինչքան բարի...  
Խեղճ նաչարի  
Տուն է կանչել  
Ու կարեկցել,  
Ղուշն անցնելիս  
Կուտ է տւել,  
Որք տեանելիս

Գիրկն է ասել,  
Ամէն ուզոր  
Վագում մօտը,  
Դեռ ոչ մի օր  
Նըրա ոտը  
Քարին դիպել,  
Ոչ փուշ կպել:  
Միրտն ու խասնաթ \*)  
Նուրբ աբրեշում,  
Ինքը գուարթ  
Ղաս-ղումաշում...



**Ա**խ, Բնչ հով-գով  
Զեփիւռ նազով  
Մազի հիւսը  
Փռած ուսը  
Մեղմ ծածանում  
Ու խելք տանում.  
Մի Խաթուն է՝  
Մաղ Կապուտկող,  
Աղջկանց զարգն է,  
Մի վարդ ծաղկող:



\*) Բնաւորութիւն:



**Մ**աղկի փնջած  
 Շրջապատում  
 Քնքոյշ ննջած  
 Հօր պալատում  
 Երազ տեսնում  
 Դաւթի մասին,  
 Սիրան է ուզում  
 Մարդ-ամուսին:

\*\*\*

**Մ**իայն մի բան կայ,  
 Ո՛վ մեծըդ հսկայ,  
 Նրա սրտից պահաս,  
 Թէ որ հասկանաս,  
 Մի վառ սէրի գիւլ \*),  
 Հազարան ըլծիւլ.  
 Եւ կը լինի նա,  
 Ով կ'արժանանայ  
 Խաթունի բաղբին՝  
 Առնել իրեն կին»...

\*\*\*

**Յ**ովհանը լսեց, տեղից վեր կացաւ,  
 Փրփրակալած այնպէս բարկացաւ,

\*) վարդ:

Որ աշուղներին ծեծեց, տրորեց,  
 Սագերն առնելով զեսնին փշրտեց.  
 Ենչ էք եկել դուք Դաւթին խաբելու  
 Եւ ձեր Խաթունի գովքն հուշակելու.

Լաւ կ'անէք փախչէք,  
 Այստեղից կորչէք»:

\*\*\*

**Ե**րեկոյեան վերջալուսի  
 Տարածուեցին շղաքներ.  
 Հշուղների այն երկուսի  
 Պափած ջարդուած դիակներ  
 Եւ ընկած են ճանապարհին:  
 Տատղները երբ եգներին  
 Եծած քշում, գիւղն են գալիս,  
 Հնց այնտեղին մօտենալիս,  
 Էր ընկած են աշուղները,  
 Կանկարծ խրտնում այն եգները,  
 Կյր են գցում նրատողներին:  
 Պանք գտան աշուղներին՝  
 Պոնք լացով աղաչեցին  
 Կենն իրենց, և հարցրեցին.  
 «Այս բերդի մէջ նատողն ո՞վ է»:  
 «Այն Յովհանը, որ Ձէնով է.  
 Կ Դաւիթը՝ եղբօրդին»



Թագաւոր է Մարայ թախտին»:  
 ժողովելով տունն ձեռքը  
 Համբուսների կոտորտանքը.  
 Աշուղներն էլ փող բաշխեցին,  
 Շատ օրհնեցին, կեանք մաղթեցին.  
 Մարայ աշխարհ ճամփայ ընկան,  
 Հարց ու փորձով Դաւթին գտան.  
 Խոնարհ գլուխ իջեցրին  
 Եւ Խաթունի գովքն երգեցին.  
 Դաւիթ խնդաց, երկար լսեց,  
 Խաղն ու գովքը շատ հաւանեց,  
 Աշուղներին տալով պարգև,  
 Ասաց. «Այժմ գնա՛ք բարև.  
 Դուք գնացէ՛ք  
 Ու պատմեցէ՛ք  
 Ձեր Խաթունին,  
 Չորս օր Դաւթին,  
 Թէ կը սիրի,  
 Թ'ո՞ղ սպասի...»:

\*~\*

Նոր սագերով  
 Պարգևներով  
 Աշուղները շացան,

Դաւթի մօտից հեռացան  
 Եւ Խաթունին պատմեցին,  
 Սիրտը այսպէս վառեցին.  
 «Ազիզ Խաթուն, արմանք զարմանք,  
 Խօսք չենք ճարում, ինչ որ տեսանք.  
 Գիտե՞ս, ո՞վ է Դաւիթը,  
 Այն լեռնական լիզի/ծը.  
 Սաղ աշխարհը զարգանդում,  
 Պահլաւաններ է ջարդում.  
 Ո՞վ է կարում ձէն հանի,  
 Թիքէն ալանջ կը թողնի:  
 Մի բոյ ունի ինչպէս սար,  
 Ոյժ կայծակին հաւասար,  
 Հուժկու, շլոտ իր կոներ  
 Տեղից շարժում մեծ լեռներ.  
 Աչքերը բաց,  
 Վառման հոտց,  
 Յօնքերը թուխ,  
 Ոնց հրաբուխ,  
 Ամեն ոտը մի գերան.  
 Երբ բացում է իր բերան,  
 Կարծես կրակ է թափում.  
 Հուրքից մարդ է սարսափում...»

\*~\*



**Ա**ռիւծաձև Մհերի  
Նա գաւաւին է քաջարի.  
Հօրեղբայրն է Յովհանը,  
Ձէն դրրդում Սասունը:

\*~\*

**Ն**ա է խալխի սիրելին...  
Երբ հեծնում է Ջալալին,  
Քրտինք ու քափ  
Դափ ու դրափ  
Ձորեր թնդում,  
Լեռներ ճեղքում,  
Հէնց է փախչում  
Օդում թռչում,  
Որ թռչելու ժամանակ  
Հողը դողում ոտքի տակ...  
Ամբողջ աշխարհ զմայլած  
Դուրս է գալիս թամաշա,  
Իսկ Դաւիթը ձին հեծած,  
Փառքով ինչպէս մի փաշա,  
Սըլանում է կռուի դաշտ:  
Խալխի աչքը սիրով հաշտ.  
Մտիկ անում  
Փառաբանում...

Այնքան կարիճ և ուժեղ՝  
Որ հարիւր մարդ միատեղ  
Եթէ զօրեն  
Ու չարչարեն,  
Է՛լ չեն կարող ոլորուել  
Կուռը, ձեռը և շարժել:

\*~\*

**Ե**ր դուաթը.  
Իսկ սուրաթը\*.)  
Մի շարմաղ է,  
Յողի շաղ է,  
Ժպտուն, ուրախ,  
Լուսաթաթախ.  
Անգին խասեաթ,  
Բոյ ու բուսաթ  
Մի նոնենի,  
Խնձորենի.  
Բեղեր ունի հիւսած, սրած,  
Ամեն մազը թազա \*\*) ծլած.  
Ե՛լ արծուի քիթ, և՛ սուր ականջ,  
Կուրծքը բարձր մի սարի լանջ.

\*) Պատկերը, զիմագիծը:

\*\*) Նոր, այսինքն աղուամազ:



Մի Մըսուր է  
 Ու մի Սասուն,  
 Մաղ խաբար է  
 Դաւթի անուն.

Մի Ղիւան  
 Մենակ ջան.

Ունի բարի սիրտ,

Մեզ լսեց հանգիստ.

Նոր սագեր բաշխեց

Ու ոսկի, ասեց.

«Միւրոյս ողջոյնը տարէք Սաթունին,

Զորս օրից յետոյ կը տեսնէ Դաւթին»:



**Զ**որրորդ օրը ձին հեծաւ Դաւիթը,  
 Կէս օրին հասաւ ժժմակայ քիթը,  
 Տեսաւ տասներկու գութանաւորներ  
 Դաշար հերկելիս երգում զորովներ:  
 Ասաց. «Գութանչիք, հաց չունիք, ուտեմ,  
 Քաղցած ու ծարաւ ճանապարհորդ եմ»:  
 — Այդ մօտիկ գետի զրաղը գնա,  
 Կեր, ինչքան կ'ուզես, փորդ կշտանայ.  
 Այնտեղ ենք դրել հացն ու կերակուր,  
 Վրէն էլ կարող ես խմել սառը ջուր:

Դաւիթ գնաց, հացին ընկաւ,  
 Վեց օրուայ հաց մի փոր կերաւ.

Մէկը տեսաւ

Ու զարմացաւ.

«Այ մարդ, կերկո՞ղս, ի՞նչ ես անում,  
 Ի՞նչ ես քաղցած մեզ սպանում,

Մնալու ենք մենք անօթի,

Բաս դու չունի՞ս խիղճ ամօթի.

Բոլոր հացը կըլանեցիր,

Մեզ ժանանայ չը թողեցիր.

Մի շաբաթուայ հաց ենք բերել.

Մինչև պրծնենք տափը վարել,

Մենք այստեղ ենք, ո՞վ մեզ համար

Բերէ տանից հացի պաշար»:

— «Ի՞նչ էք, ասաց, զուր նեղանում,

Խոժոռվում էք, ժանգժանգ անում.

Այստեղ կ'ուզէք

Դուք նրստեցէք,

Իսկ ես կ'երթամ,

Զի անցնիլ ժամ,

Զեր շաբաթուայ վարը կ'անեմ.

Ի՞նչ, անօթի ձեզ կը թողնեմ:

Կը հասնէք տուն

Այս երիկուն:

Նա դուրս եկաւ



Դաշտը, տեսաւ  
 Խեղճ լծկաններ՝  
 Բաց լեզուներ  
 Մի գազ հանած,  
 Քրտկոխ, հեած,  
 Տապից խաշում  
 Գուլթան քաշում:

Խղճահարուեց  
 Ու արձակեց  
 Գոմէշներին,  
 Տարաւ շրին՝  
 Պառկոտելու,  
 Հովանալու:

Բայց մաճկալը անէծք թափեց.  
 — «Մնւ, Դաւիթը պինդ բրդաւեց.

Տնւր ինձ շղթան,  
 Տես քո գուլթան  
 Ո՞ւր կը հանեմ  
 Հրրաշք կ'անեմ»:



Յա ձին նրատեց,  
 Շղթան բրունեց,  
 Մէկ հանում էր

Սնւ սարն ի վեր,  
 Մէկ այնտեղից  
 Գլխիվայրից  
 Ցած էր բերում,  
 Ակօս վարում:

Իննը պտոյտ տարաւ բերաւ,  
 Մինչև Մառնիկ գիւղը հասաւ.  
 Տասնուվեց վերջացրեց,  
 Մի գուլթնավար միայն թողեց.  
 Գուլթանչիքը շատ դարմացան  
 Ու ասեցին միաբերան.  
 — «Ձը լինի՞, քաջ Դաւիթն ես դու»:  
 Ասաց. «Ես եմ. այսքան մարդու  
 Երբ սրբեցի հացն ու աման,  
 Ասիք, մարդիկ կ'ուտէ, եաման.

Գուլթան քաշող,  
 Քրտինք թափող  
 Շատ հաց կ'ուտէ,  
 Բաս ի՞նչ կ'անէ»:

— «Այդ քո ձիու հունարն է,  
 Ցնյց տուր, որ քո շնորքն է.

Ձիուց իջեր  
 Ինքը քաշիր»:

Վիրաւորուեց ու բարկացաւ,  
 Իսկոյն ձիուց նա ցած իջաւ.



Գութանը պինդ ձեռքով բռնեց,  
 Մընացածն էլ վերջացրեց:  
 «Հաւատացինք, դու ես Դաւիթ Սասուայ ծուռը,  
 Առանց ձիու դու ցոյց աւիր քո հունարը.  
 Հագա՛ր բարով եկել ես,  
 Դու մեր գլխին տեղ ունես»:



**Գ**ութանչիքը երիկուն  
 Երգ ասելով դարձան տուն.  
 «Ինչո՞ւ համար իմ արտեր  
 Թողիք անվար ու անտեր»:  
 — Գիւղի իշխան, Աստուած վկայ,  
 Վարը պրծանք, հաւատան»:  
 Բայց իշխանը չը հաւատաց,  
 Ամպի նրման որոտաց.  
 «Ո՞ւմ էք խաբում, խելքը կարում.  
 Ո՞վ է տեսել, որ մի օրում  
 Տասն և երկու գութան վարի  
 Շաբթական գործ վերջացնուի...»:  
 Առաւօտը նա ձի հեծաւ,  
 Գնաց դաշտը, ուղիղ տեսաւ.  
 Հարցրեց նրանց զարմանալով,  
 Հէյ, դուք որտեղ և վարողն ո՞վ:

Սա ձեր կռան բանը չէ.  
 Սա մեծ մարդու հրրաջք է»:  
 Գութանչիքը պատմեցին,  
 Թէ Դաւիթն էր Սասունցին:



**Ի**շխան կարիճ աղջիկ ունէր,  
 Ը շատ կոռոզ պահլաւան էր.  
 Նըրա անուն  
 Բանայ յանում:  
 Նրա ձեռքը շատն էր խընդրում.  
 Բայց ոչ ոքի նա չէր զընում.  
 Երգուեց, եթէ Դաւիթ չառնի,  
 Կին չը գընալ մի ուրիշի.  
 Պահապաններ ճամփին զրեց  
 Ու պատուիրեց.  
 «Այս կամըջին աչքը պահէք,  
 Երբ Դաւիթ գայ՝ իմաց արէք»:



**Մ**ծմախայ քլծից Դաւիթ քշեց ձին,  
 Գնաց Խաթունի կանգնեց առաջին.  
 Երբ պատուհանից Խաթունը տեսաւ.  
 Ժպիտը դէմքին շատ ուրախացաւ



Ու կանգնեց դիմաց,  
Մի խնձոր դարկեց,  
Դաւիթը խնդաց,  
Խնձորը բրնձեց:

Ձին քշեց, զնաց մօտեցաւ դռան,  
Այնտեղ կանգնած էր մի մեծ դռնապան,  
Անուէր Համտօյ, երեսը մըրուզ,  
Պուրկ կախ սրտին և ձեռքին լծակուզ:

Դաւիթը տեսաւ,  
Յանկարծ վախեցաւ.  
Բարև տուաւ,  
Բարև առաւ.

Ասաց ապշած. «Ի՞նչ օրից  
Ես ծնուել եմ իմ մօրից՝  
Մարդու բարև չեմ ստել,  
Այսօր հրաշք եմ տեսել.  
Համտօյին եմ բարևել»:  
Համտօյին ասաց. «Քառսուն տարի  
Դռնապան եմ մեր Խաթունի.  
Մարդու բարև չեմ առել,  
Այսօր Դաւիթին եմ տեսել,  
Վախից բարև եմ ստել»:  
Դաւիթը ասաց.  
«Օրհնեալ է Աստուած,  
Թէ դու բարևս վախից առար

Եւ իմ առաջ դառը դառար,  
Ես էլ քեզնից սարսափեցի,  
Ես էլ վախից բարևեցի.  
Թէ Համտօյդ չը բարևէր,  
Յաւ կը դառնար՝ սիրտս կ'այրէր:  
Համօլ, ասա, ո՞վ կայ ներսը,  
Խօ մենակ է Խաթուն հարսը»:  
—Ո՛չ, քառասուն հարսնախօսներ,  
Որ զրկել են պահլաւաններ.  
Համգա—Լօսայ  
Բաթան—Չօսայ \*)  
Եւ Շըրըղան,  
Խորասական:

Քանի տարիներ ընկած պալատում,  
Նրանք խնդրում են ձեռքը Խաթունի.  
Սակայն ոչ ոքի նա չէ հաւանում,  
Սրտի ուղածըն մի ուրիշն ունի»:  
—«Գոմը քաշիր, կապիր իմ ձին».  
Բայց Քուռիկի թունդ աքացին  
Ողջ ձիերին գոմից փախցրեց,  
Նրանց կերը ինքը մարսեց:

\* \* \*

\*) Այս հերոսի անունն չենք հանդիպում զրի առնը-  
ուած ոչ մի վարիանտում, բայց ես լսել եմ Տաճկա-  
Հայաստանում (Վասպուրական) այս վարիանտը եր-  
գոյ մի աշուղից:



**Գ**աւիթ մտաւ

Ներսը, տեսաւ

Քառասուն հոգի պահպաւաններ,  
Նստած թախտին հարմնախօսներ.

Մէկը միւսից սարսափելի,

Տեսք ունէին զարմանալի:

Յոգնած, քաղցած

Դաւիթ գնաց.

Ու փառահեղ,

Նստեց մէջտեղ:

«Այստեղ եօթը, տասը տարի

Ձուր մնում ենք ընկած գերի,

Որ Խաթունը հաւանութեան

Բարեհաճի տալ մեզ նշան.

Բայց հէնց եկաւ շողկամակնը

Այդ Սասունցին, սիրտն ընկաւ սէր,

Դեռ երեսը չը տեսած,

Խնձոր զարկեց խնդացած»:



**Ն**րանք Դաւիթին ճանաչեցին,

Միւրոյ բաղդին նախանձեցին,

Այն միջոցին կեր ու խումի

Սպասում են յարմար ժամի,

Թրերն հանած սրփոռցի տակ,

Գաղտնի կերպով, որ նահատակ

Անեն Դաւիթին. բայց գոռաց նա.

«Ի՞նչ էք վերցնում մի մի կլծղայ,

Խմում զինի դող-դող սրտով,

Բերէք զինի մի մեծ տաշտով...»:

Ծածուկ նրանք պայման արին,

Դաւիթին անչափ խրմացրին,

Որ քէֆը չաղ՝ հարբեցընեն.

Ու հեշտութեամբ վռէժ լուծեն:

Դաւիթն ասաց. «Թողէք հիմի

Ամեն մինը կարգով խմի.

Ո՛վ դօշաղ է, թող քէֆ անի,

Ո՛վ կը հարբի, պառկի, քնի»:

Այս որ ասեց,

Ձեռքը մեկնեց

Տաշտը վերցրեց

Գլխին քաշեց:

«Եօթը տարւայ նուան զինի.

Ասէք եղբայր, անուշ լինի».

Մէկ կանչում էր, մէկ խրմացնում,

Բաժակները չըխչըխկացնում.

Խաղ էր ասում ուսնգի-ուսնգի,

Կլկացնում հազար հանգի.

Մի սուփրայ էր, մի Դաւիթ:



Ընկերները կախած քիթ,  
 Տմբումբացնում գլխները,  
 Մոռանալով թրերը:  
 Դաւիթն ասաց.  
 «Համտօլ, վեր կաց,  
 Հացն հաւաքիր, կոխ են տալիս,  
 Հարբած, պառկած ու փսխելիս»:

\*~\*

**Հ**ացն հաւաքուեց,  
 Եւ նա տնդդեց,  
 Սփռոցի տակ մերկացրած  
 Տեսաւ ծածուկ թրեր դրած.  
 Ծնկան դրեց ու քաշեց,  
 Կտոր-կտոր փշրտեց:  
 — «Համտօլ, արի հաւաքիր,  
 Խուրջինումդ տար պահիր:  
 Հալքաթ \*) մի օր պէտք կը դայ,  
 Լաւ մեխ ու նալ կը դառնայ»:

\*~\*

**Ե**րբ հարբածներ ուշքի եկան  
 Եւ թրերին վրայ ընկան,  
 Նա թուրն տռաւ,

\*) Երսւ:

Առիւծ դառաւ.  
 «Ո՛վ քաջ ասլաններ  
 Ու պահլաւաններ,  
 Բայց Դաւիթս համար  
 Համեղ թիքաններ,  
 Դճւք էիք ուզում  
 Դաւիթին սպանել.  
 Միայն երազում  
 Կարէք այդ տեսնել.  
 Մօծաաջ \*) չեմ լինիլ  
 Ձեզ պէս նամարդին \*\*),  
 Ձեմ էլ ափսոսիլ  
 Ձեր կորած բաղդին...»:

Պահլաւաններ սարսափեցին,  
 Մէկ մէկ տանից դուրս ծլկեցին:

\*~\*

**Կ**անչեց ծառայ Համտօլին.  
 «Ո՞րտեղ տեսնենք Խաթունին»:  
 — Բառչի միջին դարբասի.  
 Մի քիչ այստեղ սպասի.  
 Նաժիշաներով շրջապատուած,

\*) Տակով չեմ լինիլ:

\*\*) Տմարդին կամ դաւաճանին:



Երասուղումաշ շորեր հագած,  
 Սովորականին այսօր կը գայ  
 Եւ հաւուզում կը լողանայ.  
 Դու կարող ես հեռուից նայել,  
 Սքանչանալ ու հմայուել»:  
 Դաւիթ ըսողչի պատին կպաւ  
 Ու ինչ տեսաւ.

Նաժիշտները շարուկ-շարուկ  
 Իջան պարտէզ կոնսերնուկ.  
 Երբ Խաթունն էլ յետնուց եկաւ.  
 Դաւիթ յանկարծ լուռ մօտեցաւ,  
 Գրկեց նրան, որ համբուրի.  
 Բայց Խաթունն էր, ինչ համբերի,  
 Այնպէս զարկեց ամբն ի աման,  
 Արիւն դարձաւ քիթն ու բերան.  
 Իսկ ինքը գնաց ըսողչում մերկացաւ,  
 Մարմար հաւուզում հով-հով լողացաւ.  
 Դաւիթը ամեն կսկիծ կը տանէր,  
 Միայն թէ մի կին անպատիւ չանէր:  
 Կրակ էր կտրել, այնպէս հերսոտել,  
 Որ ուզում էր իր միտը կրծոտել.  
 Սաստիկ բարկացաւ,  
 Այդտեղից դարձաւ.  
 —«Համտօլ, դէ վազիր,  
 Գոմից ձիս քաշիր,

Պիտի որ հեծնեմ,  
 Քաղաքն աւերեմ»:  
 —Թէ Ասուած սիրես,  
 Թող հիմի մնայ,  
 Լուսին կը զարթնես՝  
 Աւերի, գնայ»:



**Մ**ուլթն էր. Դաւիթը պառկած մահիճում  
 Համբերութիւնից անքուն էր տանջվում.  
 Սպասում էր նա՛ երբ կը լուսանայ,  
 Որ Կապուտկողը աւերէ, գնայ:  
 Դեռ զբօսնում էր կանաչ պարտէզում  
 Խաթուն միամիտ. մինչև որ վազում  
 Մի կազ նաժիշտը, ասում է. «Խաթուն,  
 Սազ ժողովրդին թողեցիր (սաթում \*),  
 Ի՞նչ սե ժամին ես այստեղ զբօսնում,  
 Մի փրկութեան ճար ինչո՞ւ չես տեսնում:  
 Դաւիթ հերսոտած,  
 Նժոյզը նըստած,  
 Պատրաստվում է կռիւ բանալ,  
 Հօրըդ քաղաք քանդել, դընալ...»:



\*) Պատուհասի, փորձանքի մէջ:



Թաթուն խոլոյն թողեց ըաղչէն,  
 Վերցրին շորի կապած ըռխչէն,  
 Եկան Դաւթին տարան սենեակ,  
 Խաթունն ասաց. «Դու իմ տեղակ  
 Բարկացել ես, որ հըրեցի,  
 Պազի \*) համար անպատուեցի.  
 Այժմ կը տամ քեզ երեք պազ,  
 Որ կատարես սրտիս փափագ.  
 Մէկն Աստուծոյ սիրոյն համար,  
 Մէկը ուխտած քո ճանապարհ,  
 Մէկն էլ նրան, որ կտրի՞մ ես,  
 Բայց խօսքիցս դու չը փախչես.  
 Նրան կ'ասեմ ես տղամարդ,  
 Եզիղներին որ կը տայ շարդ.  
 Ինձ կ'ազատի նրանց ձեռքից՝  
 Պահանջում են սէր ինձանից:  
 Գիտե՞ս ինչո՞ւ անպատուեցի  
 Ու քեզ համբոյր չը տուեցի.  
 Ինձ բերել էս—հազար ափսոս—  
 Գլուխն արդէն այն հարսնախօս  
 Հսկաների, որ ամեն օր  
 Գալիս տանում զահլէն իմ հօր...»:

\* \* \*

\*) Համբոյր:

Դաւթի սիրտը այժմ կակղեց,  
 Փարեց, պագեց ու ծիծաղեց.  
 —«Ովքե՞ր են այդ հսկաները,  
 Ասա, գնամ ու գլխները  
 Արնաթաթախ ցցած բերեմ  
 Զողի վրայ, քեզ նուիրեմ»:  
 Աչքերը լաց  
 Խաթունն ասաց.  
 «Համզայ—Ղօսայ  
 Բաթան—Զօսայ  
 Եւ Շըրըղան,  
 Խորասահան»:  
 —«Ի՞նչ ես լալիս, դեռ չեմ մեռել,  
 Դեռ թշնամուն գլուխ ծռել.  
 Ես ասացի շուտով կ'երթամ,  
 Սիրոյդ խաթնը կռիւ կըտամ,  
 Բայց թէ բողբոս այնպէս կտրէ,  
 Ինձ սպանեն, դու եկ փնտրէ,  
 Կուռի դաշտում իմ դիակը.  
 Ինձ ջոկելու նըշանակը  
 Աջ թևիս է՝  
 Մի լօսաչ մսէ.  
 Այդ նըշանով դու ճանաչիր



Եւ բեր ծածուկ մի տեղ թաղիր.  
 Ու չը թողես իմ մարմին,  
 Որ անպատուի թշնամին»:  
 Խաթունն ասաց. «Ես լալիս եմ,  
 Դժբաղդ գլխիս վնյ տալիս եմ  
 Նրա համար՝ հօրըս վրայ  
 Գիր է զրկել Համդա-Լօուայ.  
 Թէ «Աղջկանըդ ինձ ուղարկիր,  
 Թէ չէ՝ կ'աւրեմ քո սաղ երկիր»:  
 Վէզիրներին հայրս կանչեց,  
 Թուղթը կարգաց, գլուխ շարժեց.  
 «Ի՞նչ էք ասում պատասխանին,  
 Այդ գորաւոր պահլաւանին»:  
 Վէզիրներն էլ՝ «Թէ դու գիտես,  
 Հընար չը կայ, որ ազատես.

Եկ աղջկանըդ շորը հագցնենք  
 Ու Համդային ճամփայ գցենք»:  
 Մտատանջուած երբ իմ հայրը  
 Որոշելը դժուարանում,  
 Պատիկ տղայ՝ իմ եղբայրը  
 Այդ միջոցին քաջ մօտենում  
 Եւ յայտնում է, թէ «Համդային  
 Քո աղջիկը որ զրկում ես,  
 Ի՞նչ պատասխան կըտաս Դաւթին,  
 Հետեանքը դու զգո՞ւմ ես»:

Բայց դու մի բան լաւ չես արել,  
 Որ հօրըս չես ներկայացել.  
 Նա ասում է. «Չեմ ճանաչում»...  
 Մարդ կայ դուան, քեզ է կանչում»:

\*\*\*

**Դ**աւիթ գնաց համարձակ, քաջ,  
 Ամիրանի կանգնեց առաջ.  
 Վէզիրները շատ զարմացան,  
 Շէնք-շնորքին երբ նայեցան.  
 Ի՞նչ տղամարդ, բոյը եկել,  
 Սի գեղեցիկ շինար դառել:  
 Ամիրանը թուղթը կարգաց,  
 Մտիկ տալով Դաւթին ասաց.  
 — «Դու կա՞րող ես պատերազմել  
 Եւ գլուխը այստեղ բերել.  
 Թէ Համդային սպանեցիր՝  
 Ե՛կ Խաթունին մարդ տիրացիր.  
 Թէ յաղթուեցիր, կըտանք նրան»:  
 — «Բայց քառսուն օր դու, Ամիրան,  
 Ինձ կը սպասես» — Դաւիթն ասաց,  
 Եւ Խաթունի կանգնեց գլխաց,  
 Չիուն հեծած. «Մնաս բարով,  
 Ես գնում եմ քառսուն օրով.



Թէ յետ եկայ, քո բազմն եմ,  
 Թէ չէ՝ կուուամ մեռած եմ.  
 Երբ քառասուն անցնէ օրը,  
 Տեսար չեկայ՝ աղի շորը  
 Հագած՝ արի նշնով գտիր,  
 Եւ աւանդըս ճիշտ կատարիր»:

\*~\*

**Չին թուաւ,**

Հայն առաւ

Մեր Խաթունի սիրտը այրեց,  
 Նոր ափսոսաց ու փոշմանեց.  
 — «Ի՞նչո՞ւ Դաւթին ես գարկեցի  
 Խնձոր-նշան ու շարժեցի  
 Նախանձները մեր դուշմանի,  
 Քառասուն մեծ պահլաւանի:  
 Հաւ կը լինէր, որ զրկէի  
 Համգայի մօտ մի ուրիշի,  
 Իսկ Դաւթը այստեղ մնար  
 Զլւան-Չահէլ եարիս համար...»:

\*~\*

**Դ**

աւթի գնաց, գնաց հասաւ  
 Եւ Համգայի պարտա մտաւ,  
 Նստած տեսաւ մեծ աթոռին,

Ո՞վ կը մրցէր նրա գօտին:  
 Սարսափելի տեսք ունէր նա.  
 Քարշ էր տալիս գետնի վրայ  
 Իր ներքևի մոռթը.  
 Բայց չը վախեց Դաւթը.  
 Բարև տուաւ,  
 Բարև առաւ,  
 Համգան հարցրեց. «Ի՞նչ մարդ ես,  
 Ի՞նչ ուժի տէր, կախարդ ես»...  
 — «Ես կախարդ չեմ,  
 Ղրկուած մարդ եմ  
 Այն Խանուամի,  
 Որ կը կամի  
 Սիրտըդ նրան  
 Սէր-կնութեան:  
 Նրա կշտից եկել եմ՝  
 Մի նշան տաս, որ տանեմ»:

Շատ դուր եկաւ պահլաւանին  
 Դաւթի խօսքը և մատանին  
 Հանեց, տուաւ իր ճկոյթից,  
 Եւ նա Դաւթից

Ուրիշ վատ բան չէր սպասում,  
 Դէն շարտեց. «Ի՞նչ եմ անում»:  
 — «Բայց ի՞նչ կ'ուզես, որ տամ նշան  
 Ընդունելի — տանես նրան»:



— «Քո գլուխը, ուրիշ ոչինչ»:  
 Հէնց որ լսեց քափ ու ճոխնչ  
 Բռնեց նրան, շատ հերսոտուեց,  
 Վրայ թռաւ ու յարձակուեց.  
 Իրար զխպան ու բռնեցին,  
 Թափթափ տուին, քաշքշեցին.  
 Վերջը Դաւիթ զարկեց գետին,  
 Իսկոյն ծունկը գրեց սրտին.

Թուրը հանեց,  
 Վիզը թոցրեց:

Հէնց պատրաստուեց նստել ձին,  
 Յանկարծ բսան առաջին  
 Այն յաղթանդամ երկու հսկան՝  
 Բաթան-Ջօռան և Շրբրդան:  
 Առաջինը ունէր հունար,  
 Որ բերանը լայն կը բանար,  
 Ու կը փչէր, հա՛, կը փչէր,  
 Կը գլորուէր՝ ինչի զխաչէր.  
 Իսկ երկրորդի շուրթը վերին  
 Այնքան կախուել, հասել սրտին,  
 Որ թիկունքին ծալ-ծալ տալով,  
 Տարել, կապել կեռ շանգայով:  
 Դաւիթ տեսաւ ինչ հրէշներ,  
 Օգ մըրկած, թո՛ղ, աղմուկներ...  
 Գուրգ ու վահան նրանք վերցրին,

Յողնած Դաւիթին նեղ լրծեցին.

Բայց նա կանչեց  
 Ու աղաչեց.

— «Ե՛ս Մարութայ-Աստուարածին՝  
 Խաչ-Պատրազին,  
 Որ աջ թևին»...»

Արագութեամբ կայծակի  
 Թուրը այնպէս շեշտակի  
 Նետեց նրանց, որ գլխներ  
 Թրպրտացին լեզուներ.  
 Նա մազերով երկծալ կապեց,  
 Խուրջինի պէս թամբից կախեց.  
 Պոօշները գետին հասնում,  
 Գութանի պէս հողն ալօսում:

\*~\*~\*

**Ք**առստուն օրը արդէն անցաւ.

— «Ինչո՞ւ այսքան նա ուշացաւ.  
 Գընամ գտնեմ զխակը  
 Եւ կատարեմ կտակը»:  
 Շորեր հագաւ մարդանակ,  
 Կապեց զրահ, ասպանդակ  
 Այնպէս խթեց կողերին,  
 Որ զըրդի \*) պէս թռաւ ձին.

\*) Բաղէ:



Դաւիթ տեսաւ ճամփակիրին  
 Մի ձիաւոր դալիս հեռուից.  
 Բարձրանում է երկինք փռչին,  
 Կրակ թափում նալան \*) տակից.  
 Միայն Դաւիթ ճանաչեց,  
 Բարև տուաւ ու հարցրեց.  
     «Ո՞ւր ես գնում,  
     Ո՞ւմն ես ուզում»:  
 — «Գնում եմ Մհերի Դաւթին գտնելու»:  
 — «Ես սպանեցի, դու չես տեսնելու»:  
 Հակառակորդը շատ բարկացաւ,  
 Թիկնակողմը Դաւթի անցաւ,  
 Զարկեց մի գուրգ, բայց նա ծռուեց,  
 Ասպանդակից մի ոտն հանեց.  
 Գուրգը դիպաւ ասպանդակին,  
 Տարաւ խրեց գետնի տակին.  
 Զանգուայ գուրան \*\*), Զանգուայ գուրան  
 Մաղ ծածկել են ամպ ու դուման.  
 Կռուի ձայնից դլրրգացին  
 Երկնի բարձր ոլորաներ.  
 Ամպ է գոռում ծղրտոցին,  
 Դաշտն օրօրում և ոտներ,  
 Արև, երկինք, հնդ ու գետին,

\*) Պայտի: \*\*) Գուրան-սարահարթ:

Սւր, քօլ, անտան, օղը դաշտին  
 Ողջ բռնել են սիւներ փռչի,  
 Քափ քրտնքի բուռն գոլորշի...  
 Դաւիթ շտկուեց թամբի վրայ.  
     «Ե՛ս հաց, գինի,  
     Տէր կենդանի»:  
 Գուրգը տարաւ, որ գլխին տայ՝  
 Իբր այն մաքով, որ սպանի.  
 Դիմացինը բայց կուչ եկաւ,  
     Ոտքերն ընկաւ  
     Եւ ծամերը  
     Ու ծծերը  
     Նա ցոյց տուաւ:  
 — «Մի սպանիր, Աստուած սիրես,  
 Կինարմատ եմ, խղճա՛ ու տես՝»:  
 Դաւիթն ասաց. «Այդ ես գիտեմ,  
 Բայց ես կ'ուզեմ մի գուրգ զարկեմ՝  
     Քեզ ցած տանի  
     Ու սպանի.  
 Սա երկրորդն է հակառակում,  
 Ինձ անվայել խայտառակում.  
 Միտդ է, լիշիբ, այ անզգամ,  
 Պագի համար որ այն անգամ  
 Դու խփեցիր սփն ի ավան,



Արիւն դարձրիր քիթս ու բերան.  
 Թո՛ղ սա լինի փոխարէնը»:  
 Խանդուղն իսկոյն ձգեց դէնը  
 Մարդանակի հագած շորեր,  
 Ընկաւ գիրկը. ինչ համբոյրներ...  
 Մէկը միւսի սիրտը առան  
 Եւ Կապուտկող վերագարձան:

\* \*

— «**Պ**ու խնդրեցիր, ս՛վ Ամիրան,  
 Համգայ-Լօսի գլուխն միայն,  
     Բայց ես երկու,  
     Մեծ, ահարկու  
     Հսկաների  
     Նոյնպէս բերի.

Այժմ դատրիկդ կըտանս ինձ կին,  
 Համաձայն քո առաջարկին»:  
 Նա վերկացաւ բազմած թախտից  
 Եւ համբուրեց Դաւթի ճակտից.  
 Վէզիրներին իսկոյն կանչեց,  
 Իր երկրի մէջ մեծ փող հնչեց,  
 Որ պատրաստուեն հարսանիքի.  
 Խալին էլ ուրախ կանգնեց ոտքի,  
 Սաղ Կապուտկող գեռ կը յիշէր,  
 Այն հարսանիք եօթն օր, զիշեր:

Դաւթի մանր

**Կ**ապուտկողում անցաւ տարի.  
 Եղաւ զաւակ մի քաջարի,  
 Անուն դրին Պատիկ-Մհեր,  
 Որ շատ սիրուն նշան ունէր:  
 Թողին նրան իր պապի մօտ.  
 Ուղտեր բարձած մի առաւօտ  
 Պատրաստուեցին դէպի Սասուն.  
 Ճանապարհին այն քառասուն  
 Պահլաւաններ հանգիպեցին,  
 Դաւթի ձեռքը համբուրեցին.  
 «Ո՛վ հսկայդ քաջ Սասունի,  
 Խանդուղն քեզ հալալ լինի»:

\* \*

**Ե**րբ նրանք հասան ծծմուկայ քլծին,  
 Բանայ-Խանու՛մը հանգիպեց Դաւթին.  
 Առաջը կտրեց. «Մի մտահանի.  
 Դու հացը կերար իմ հօր գութանի,  
 Բայց իմ երեսը չուզեցիր տեսնել.



Կին առար դրան. իսկ ինձ հետ կռուել  
 Դու չեմ մտածում. առանց կռուելու  
 Չեմ թողնիլ գնաս՝ մի քայլ փոխելու»:  
 «Ներքը, չեմ կարող, հիմի չեմ ազատ,  
 Տեսնում եմ ինձ հետ կայ կնիկարմատ.  
 Թող տանեմ Սասուն, օրը եօթներորդ,  
 Հաւատան, կը գամ կռուելու, օրիորդ»:  
 — «Երգուիր, որ կը գաս  
 Ու կռիւ կըտաս»:

Ազնիւ խօսք տուեց,  
 Դաւիթը երգուեց:



**Ս**ասուն հասան,  
 Նոր քէփ տեսան.  
 Մեծ ու պատիկ,  
 Տղայ, աղջիկ.  
 Հարսանիք էր  
 Եօթն օր, գիշեր...



**Դ**ուշման չը մնաց, սող կոտորեցի,  
 Ամենքին թրիս մատող արեցի,

Ամեն չարերի արի շանտատակ,  
 Սար, ձոր, չը մնաց՝ տուի ոտի տակ.  
 Այժմ յոգնել եմ, շատ եմ ջարդատուել  
 Եւ սող մարմինըս շատ քրանահոտուել:  
 Վեր կաց, այ կնիկ, պղինձ ջուր տաքցրու,  
 Ինձ լողացրու,  
 Որ ջանըս կեղտից մի քիչ զինջանայ  
 Ու քիչ հովանայ»:

Շորերն հանեց, կինը տեսաւ...  
 Թևի վրայ Սաչ նշանը  
 Սկացել է. նա լաց եղաւ,  
 Դէնը հրեց լողարանը:  
 — «Ի՞նչ է, կնիկ, պատահել».  
 — «Թևիդ խաչն է սկացել».  
 — «Ա՛հ, յիշեցի, մոռացել եմ՝  
 Այն աղջկանը խոտացել եմ  
 Եօթն օր միայն, բայց ի՞նչ արի.  
 Եօթն օրն գարձաւ եօթն տարի.

Սխալուեցի,  
 Որ երգուեցի

Պատրագիւտի սուրը նշանով.  
 Նա չի սիրում իր անունով  
 Իսկի երգել, կորաւ խաղաւ  
 Եւ գօրութիւն, և՛ մեծ հնար.  
 Այսուհետև բանըս բուրդ է,



Որ երգուել էմ—Թէկուզ շարգէ  
Պիտի գնամ: Բանայ-Սանուժ  
Կուռի համար ինձ է մնում»:



**Ն**ա վեր կացաւ, թուրը կապեց,  
Հեծաւ ձիուն, իսկոյն զարթեց,  
Այն կամրջին գնաց, հասաւ,  
Բայց թշնամուն հա չը տեսաւ:  
Գետի ափին հանեց շորը  
Եւ անզգոյշ մտաւ ջուրը.  
Ղժժոցի մէջ գնաց լողաց,  
Բայց նա յանկարծ մարմնով սոսկաց:  
Դու մի ասիլ— Բանայ-Սանուժ,  
Դարանամուտ այն կամուրջից,  
Մի մահաբեր նետ է զարկում,  
Որ անցնում է թիկնամիջից:  
Դաւիթն այնպէս ուժգին գոռում,  
Որ Սասուն է ձայնը հասնում.  
Թունդ հարուածից դեռ չը մեռաւ,  
Կապը կտրեց, ձին դուրս թռաւ,  
Ի՞նչ պատահեց ճանապարհին,  
Ջարդեց, փշրեց ոտի տակին:  
Նա իմաստուն,  
Հասաւ Սասուն,

Գնաց կանգնեց դռանը.  
Հէնց որ տեսաւ Սաթուհը,  
Մասը կծեց  
Ու մտածեց.

«Վայ իմ գլխին, ի՞նչ տեսայ,  
Ձին եկել է, տէր չը կայ.  
Սպանեցին իմ Դաւիթին,  
Հասէ՞ք շուտով հաւարին»:



**Ե**թը դոմշի  
Բերին կաշի,  
Արևի տակ չորացրին,  
Մէջն Յովհաննին փաթաթեցին.  
Այնպէս գոռաց բարկութիւնից,  
Որ շարժուեցին լեռներ հիմքից.  
Իսկ սարսափից Բանայ-Սանուժ  
Ուշաթափած մի տեղ ընկնում:  
Չայնի վրայ դուրս են թափվում  
Եւ սանձակոծ ձիեր հեծնում,  
Թռչում դէպի ի մահ, ի զէն  
Սասունցիներ սպառազէն:  
Գոռաց Յովհանն Սասնոյ բերդից.  
— «Հէյ, գալիս ենք մենք օգնութեան»:



Գտան Դաւթին՝ թոր ու լերդից  
 Արիւն թքում, կիսակենդան.  
 Դաւթին ասաց. «Ձէնով-Յովհանն,  
 Ո՛հ, պատրաստուեց ինձ գերեզման,  
 Աւանդ, այն էլ աղջկայ նետով.  
 Դէ, ման եկէք, գտէք շուտով.  
 Մեր գոռալու ահեղ ձայնից  
 Սարսափահար նա երկիւղից  
 Պիտի լինի ընկած անշուշտ,  
 Տուէք ձեռքըս, որ արիւնոուշտ  
 Անեմ նրա դատաստանն էլ,  
 Յետոյ հանգիստ հողը մտնել...»:  
 Շատ փնտրեցին, վերջը գտան.  
 Դաւթի գրեց ոտը ստան  
 Անգուսպ ուժով քաշեց, ճըւտեց,  
 Նոր Դաւթիը հոգին աւեց:  
 Լալով Դաւթի լէշը վերցրին,  
 Ձիուն բարձած Սասուն բերին.  
     Ապա եկան,  
     Ջանին ընկան,  
     Թուր ու սրին,  
     Բարըսող արին  
 Այն աղջկայ հօր երկիրը.  
 Շէն գցեցին այն կողմերը  
 Ուրիշ մարդիկ, որ երկիւղից

Բանայ-Սանում այն հրէշից  
 Փախչում էին:—Դեռ կայ կանգուն  
     Գիւղի անուն՝  
     Առաջ ճըւտիս,  
 Յետոյ ճապկիս \*).

\* \* \*

«**Գ**ւրդիւն սարեր, գւրդիւն սարեր,  
 «Առէք ինձ ձեր խաղաղ ծոց:  
 «Դարդիս սե-սե՛ վերցրէք քարեր,  
 «Միրտս է մտել ցաւի բոց.  
 «Ինչո՞ւ համար բարձր սարից  
 «Մը՛ւ-մուռ, մը՛ւ-մո՛ւռ կը գաս, հով,  
 «Ես գրկուեցայ ազիզ կարից,  
 «Միրտս է դառել լացի ծով:  
 «Է՛յ, ճնճղուկներ, դուք ճնճղուկներ,  
 «Է՛լ մի՛ երգէք ուրախ երգ,  
 «Կու լայ, կ'ողբայ սիրտս աւեր,  
 «Դուք էլ լացէք ցաւ ու վէրբ:  
 «Ո՛ւր է Սասնայ թագ ու պարծանք,  
 «Իմ Դաւթիը աննման.  
 «Մահը խլեց իմ սիրոյ կեանք,  
 «Պատրաստելով գերեզման»:

\*) Տե՛ս պ. Ս. Մանդինեանի «Գիւցաղնական աշխարհում»:



Գրաւթի մահից յետոյ Սաթուն  
 Սուգ էր անուժ միշտ օրն ի բուն.  
 Տխուր նստած, լի կսկիծով,  
 Աչքը դարձրած արցունքի ծով:  
 — «Ի՞նչ ես լալիս, — ասաց Յովհան,  
 է՛լ մի հագիր սուգը մահուան.  
 Դաւիթ մեռաւ, փոխարէնն ես,  
 Կամքն Աստուծոյ — դու ողջ լինես»:  
 Բարեկամներ ու ազգական  
 Եկան ասին մխիթարական.  
 Մեծ աղմուկով և վճռեցին  
 Տալ կալուածքից հարսնարածին:  
 Սաթունն ասաց անմխիթար՝  
 «Տէր իմ Աստուած, եկ, հոգիս առ.  
 Հէյ... Դաւիթից յետ պէտք է նայեմ  
 Սրանց ձեռքին, առակ լինեմ.  
 Դու՞ զնացէք,  
 Ներքև իջէք,  
 Շուտ կը լսէք իմ պատասխան  
 Անբուժելի դժբաղդութեան»:



Գուրս զնացին. — Սաթուն մենակ  
 Հառաչանքով այդ ժամանակ  
 Բերդի զլուխ ելաւ տանից  
 Եւ մագերը փետելով  
 Այն ահագին բարձրութիւնից  
 Իրեն ներքև նետելով  
 Նահատակուեց ու մեռաւ:\*)  
 — «Թեքուեց մի աստղ ու կորաւ:  
 Էլ ո՞վ պէտք է տէր լինի,  
 Ո՞վ Սասունը պահպանի,  
 Ո՞վ Մհերի կապի թուր,  
 Դաւիթ չը կայ, ժառանգն ո՞ւր:  
 Մեր փառք կ'անցնի ինչպէս ծուխ,  
 Վայ ենք տալու մեր զլուխ.  
 Վայ Սասունին, վայ մեր արև,  
 Հագարաւոր քաջեր ու զև  
 Ոտի կ'ելլեն մեզ հակառակ,

\*) Գ. Մանգլինեանը գրում է, ի միջի այլոց, «Դու-  
 ցաղնական աշխարհում». Խանդուղի զլուխը զիպաւ  
 մի քարի և ծակից քարը — այդ քարի մէջ լցնում են  
 Սասնոյ կէս շափ կարեկ և ծեծում են սանդի տեղ,  
 Խանդուղի եօթնամիւլ ծամի տեղը զևս մինչև այ-  
 սօր կրկում է: Եւ մինչև այժմ էլ այդ սանդր այն-  
 տեղ է, բերդի առաջ»:



Կորսն անուն և յիշատակ...»:  
 — «Մի լար, Յովհանն, չենք կորած,  
 Սասունի ասաղը չի մեռած:  
 Ձեռը տուինք ծծերին,  
 Կաթն էր հոսում քթերին.  
 Մնշուշտ Դաւթին գաւակ կայ  
 Մեր աշխարհից բացակայ.  
 Պէտք է Կապուտկող երկրից պահանջել,  
 Ինչ պատահել է, այնտեղ է եղել»:



**Ե**ւ հաւաքուեցին խորհուրդ միասին՝  
 Ի՞նչ հնար անել ժառանգի մասին.  
 Վերջը խմբերով հեծած ձիերին,  
 Գնացին գտնել Պատիկ-Մհերին:



## ՎՐԻՊԱԿՆԵՐ

(Երկրորդ հատորում)

Նախ ընթերցողին երողամտութիւնն եմ խընդ-  
 րում իմ միւս պօէմաների մէջն էլ սպրդած  
 միքանի տպագրական վրիպակների համար,  
 որ եղել են ինձնից անկախ պատճառով:

Տպուած է

Պէտք է լինի

էջ 8 Սոժու	Սոժու
« 13 Թուր Սաչ-Պատրազի	Սաչ-Պատրազի Թուր-
կայծակի	կայծակի
« 16 է՛հ,	է՛յ,
« » Ձուր	Ձուրը
« » միտը բերաւ	միտ բերաւ
« 17 Քառսուն	Քառասուն
« 18 գոռ	կոռի
« 26 հօրը	հօրը
« « ծիծաղելով	ծիծաղով
« 29 Դօչախ	Դօչաղ
« « էն փորը	քո փորը
« 32 Արտասունքի	Արտասուքի
« 40 Սանդոզ	Սանդուզ
« 50 Համբուսների	Դամբուսների
« 51 Աչքերը բաց	Աչքերը բոց
« 60 Համաօլին	Համաօլն



«Ազգային գրադարան»



NL0254644



23173

ՄԱՍԻՆ ԵՒ ՏԵՍԵՆ ԵՌՆԵ ՀԵՐԿԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուսոս և Մալման (պատմ. պոեմ) Բիբլին 1896 թ. դիր 25 կ.
2. Ընթերցան ՄՏԵՐ (պատմ. պոեմ) Մոսկուա 1899 թ. " 25 կ.
3. Զրայմանք (ժողովրդու սորազոյրանասանդուսիւն.) Ահնեալիկ 1902 " 40 կ.
4. Պատիկ ՄՏԵՐ (պատմ. պոեմ) Բաթում 1904 թ. " 25 կ.
5. Երկու Պահլաան (պատմ. պոեմ) " 25 կ.
6. Մասունցի Դաւիթ և Տաւոյր դիր 40 կ.



Գրքեր լոյրը գրավաճառներին և հեղինակին  
Շուքաւեր.